ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 80-Լ

«09» 10 2023 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 120-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետը, 5-րդ հոդվածի 5-րդ մասը և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի կոմիտեի հետևյալ կազմը.

**Աննա Վարդապետյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (կոմիտեի նախագահ),

**Եղիազար Ավագյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ (կոմիտեի անդամ),

**Միեր Աֆրիկյան** - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար (կոմիտեի անդամ),

**Տաթևիկ Սարուխանյան** - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ (կոմիտեի անդամ),

**Ռուդոլֆ Թորոսյան** – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական (կոմիտեի անդամ),

**Հայկ Մարտիրոսյան** - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ (կոմիտեի անդամ),

**Զաբել Մաթոսյան** - «Սմարթ աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (կոմիտեի քարտուղար):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 120-Լ հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ